ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, _____ Տ.Հ. Սուջյան
«23» հունիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Զարուհի Ռոմիկի Հարությունյանի՝ «Կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական և հոգեբանական պատճառները» վերտառությամբ ԺԲ.00.05. մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Զարուհի Ռոմիկի Հարությունյանի ատենախոսությունը նվիրված է կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական և հոգեբանական պատճառների բացահայտմանը, դրանց գիտական վերլուծությանը և հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

Թեման արդիական է, քանի որ կոռուպցիան շարունակում է մնալ ժամանակակից պետությունների առջև ծառացած կարևորագույն մարտահրավերներից մեկը, իսկ դրա պատճառների բազմակողմանի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակներում:

Հետազոտության նպատակն է բացահայտել կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական և հոգեբանական պատճառները և դրանց հիման վրա մշակել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ: Նշված նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջադրվել են համապատասխան խնդիրներ, որոնք հիմնականում լուծված են ատենախոսության շրջանակներում:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ այն Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական և հոգեբանական պատճառների համալիր ուսումնասիրության առաջին փորձերից է: Աշխատության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար:

Ատենախոսությոն տեսական նշանակությունն այն է, որ ներկայացված աշխատանքը՝ կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական-հոգեբանական պատճառների ՀՀ-ում կատարված առաջին

համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են հետագա ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ:

Ատենախոսության մեջ ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել կրիմինոլոգիա, քրեական իրավունք, քրեակատարողական իրավունք ուսումնական դասընթացների դասավանդման ընթացքում:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առկա արժեքավոր համապարփակ հետազոտություններից մեկը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից և 4 հավելվածներից:

Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, իրավական հիմքը, տեսական հիմքը, փորձառնական հիմքը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների արժանահավատության աստիճանը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլխում՝ «Պահանջմունքների անբավարարության դերը կոռուպցիոն վարքագծի ձևավորման մեջ» վերտառությամբ՝ հեղինակը ներկայացնում է պահանջմունքները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ, անձի գերաճած (*դեֆորմացված*) պահանջմունքները և ցանկությունները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Երկրորդ գլխում՝ «Անձի սոցիալականացման առանձնահատկությունները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ» վերտառությամբ հեղինակը ներկայացնում է մանկության դերը կոռուպցիոն վարքագիծ ձևավորելու գործում, ընտանիքը որպես սոցիալականացման գործոն կոռուպցիոն վարքագծի ձևավորման գործընթացում, կրթական հաստատությունների և կրթության դերը կոռուպցիոն վարքագիծ ձևավորելու գործում, կոռուպցիոն վարքագիծ ուսուցանող այլ ազդակներ:

Երրորդ գլխում՝ «Կոռուպցիոն վարքագիծ ձևավորող կրիմինոլոգիական և հոգեբանական ներանձնային խորքային նախադրյալները և կոռուպցիայի կանխումը» վերտառությամբ՝ հեղինակը ներկայացնում է կոռուպցիոն վարքագծի նախադեպը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ, անձի պաշտպանական մեխանիզմները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ, ներանձնային առանձնահատկությունները և խնդիրները որպես վարքագծի պատճառ, անձի վրա ներգործող ազդեցության միջոցները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ և կոռուպցիայի կանխումը, ՀՀ-ում կոռուպցիոն հանցավորության դեմ պայքարի ընդհանուր տեսական հայեցակարգը:

Չնայած աշխատանքի ընդհանուր դրական արժեքին, այնուամենայնիվ, հեղինակի որոշ առաջարկներ մտահոգությունների տեղիք են տալիս, այսպես՝

1. Հեղինակի կողմից առաջարկվող կրիմինոլոգիական ուսումնասիրությունների ինստիտուտի ստեղծման գաղափարը հետաքրքիր է և տեսականորեն հիմնավորված (էջեր 144-146), սակայն աշխատանքում բավարար չափով հստակեցված չէ դրա կազմակերպահիրավական կարգավիճակը, լիազորությունների շրջանակը և գործող հակակոռուպցիոն ինստիտուտների, մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ փոխհարաբերությունների մեխանիզմը: Վերջին խնդրի առնչությամբ հարկ է նշել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ որպես ՀՀ ինքնավար պետական մարմնի լիազորությունների մեջ է մտնում **հեղինակի նշած տվյալ ինտիտուտի գործունեության հիմնական ուղությունները:** Այսպես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ն մասով նախատեսված լիազորություններից է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն իրականացնելը և դրանց վերաբերյալ իրավասու մարմին առաջարկություններ ներկայացնելը, կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր մշակելը և դրանք Կառավարություն ներկայացնելը, իրավասու մարմինների կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք, իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելը, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր մշակելը և միջոցառումներ իրականացնելը, կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացման համար առաջարկություններ ներկայացնելը, ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր տրամադրելը:

Հեղինակը, հիմնվելով իր վերլուծությունների և հետազոտության արդյունքների վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական պաշտոնյաներն ունեն ոչ միայն իրավական, այլ նաև էթիկական, բարոյական, վարքաբանական պարտականություններ, առաջարկում է նաև նրանց համար նախատեսել բարեվարքության և առաքինության ստուգման նպատակով **հակակոռուպցիոն վարքագծի ռիսկերի գնահատման մեխանիզմ**, որը պետք է իրականացնի վերը նշված կրիմինոլոգիական ինստիտուտի կողմից (էջեր 146-147):

Ներկայացված առաջարկի շրջանակում խնդրահարույց է «հակակոռուպցիոն վարքագծի ռիսկերի գնահատման մեխանիզմ» հասկացության կիրառումը: Մասնավորապես, «հակակոռուպցիոն վարքագիծ» հասկացությունն ինքնին ենթադրում է կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված դրական վարքագծային դրսևորումների ամբողջություն և ինքնին չի կարող դիտարկվել որպես ռիսկերի գնահատման առարկա: Հաշվի առնելով առաջարկվող մեխանիզմի նկարագրությունը՝ այն

առավելապես վերաբերում է ոչ թե «հակակոռուպցիոն վարքագծի», այլ **կոռուպցիոն վարքի ռիսկային գործոնների գնահատմանը**, որի շրջանակում կարող են ուսումնասիրվել անձի վարքաբանական, հոգեբանական և արժեքային առանձնահատկությունները, որոշումների կայացման մոտեցումները, կոռուպցիոն գայթակղություններին արձագանքման հնարավորությունները և այլ հանգամանքներ: Հետևաբար, այս համատեքստում առավել նպատակահարմար է կիրառել «Կոռուպցիոն վարքագծի ռիսկային գործոնների գնահատման մեխանիզմ» հասկացությունը: Միաժամանակ, հարկ է հաշվի առնել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում 2026 թվականի մարտի 25-ին կատարված լրացմամբ Հանձնաժողովին վերապահվել է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև նրանց խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարների տեղակալների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման լիազորությունը (26.3-րդ հոդված): Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է առաջարկվող մեխանիզմի նպատակը և բովանդակությունը դիտարկել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների ինստիտուտի շրջանակում և համադրել այն դրա իրականացման համար նախատեսված իրավական կարգավորումների, չափանիշների և ընթացակարգերի հետ:Հարկ է նկատել, որ առաջարկում «ռիսկերի գնահատում» հասկացության կիրառումը կարող է հանգեցնել տերմինաբանական շփոթության, քանի որ Հանձնաժողովին օերնքով վերահապված՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործառույթը վերաբերում է ոչ թե անձի անհատական հատկանիշների կամ վարքաբանական առանձնահատկությունների գնահատմանը, այլ կոնկրետ գործընթացներում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը և վերլուծությանը: Հետևաբար, առաջարկվող մեխանիզմը չի կարող նույնացվել կոռուպցիոն ռիսկերի գնահատման հետ և անհրաժեշտ է այն ձևակերպել այլ հասկացությամբ:Բացի այդ, առաջարկի շրջանակում նշվում է, որ գնահատումը պետք է իրականացվի «հույժ գաղտնի»: Այս ձևակերպումը ևս պահանջում է հստակեցում, քանի որ անհասկանալի է՝ խոսքը վերաբերում է արդյոք գնահատման գործընթացի գաղտնի իրականացմանը տվյալ պաշտոնատար անձից, թե գնահատման արդյունքների չհրապարակմանը: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է սահմանել նման մոտեցման իրավական հիմքերը, կիրառման սահմանները և երաշխիքները՝ հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության և գնահատման չափանիշների կանխատեսելիության սկզբունքները:Ընդհանուր առմամբ, առաջարկվող մեխանիզմի գործնական կիրառելիությունը բավարար չափով հիմնավորված չէ, քանի որ ներկայացված չեն դրա իրականացման հստակ մեթոդաբանությունը, գնահատման չափանիշները, կիրառվող գործիքակազմը, գնահատման արդյունքների նշանակությունը և դրանց հիման վրա հնարավոր որոշումների ընդունման կարգը:Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է վերանայել կիրառված տերմինաբանությունը, ինչպես նաև հստակեցնել առաջարկվող մեխանիզմի բովանդակային շրջանակը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» կանոնադրության 3-րդ գլխի 10-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում **խորհրդատվական բնույթի** եզրակացություններ:

3. Հեղինակի կողմից կաշառք տվողների և միջնորդների համար խրախուսական նորմերի ներդրման վերաբերյալ առաջարկությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ հաշվի առնելով, որ նմանատիպ իրավակարգավորումներ նախկինում առկա են եղել ՀՀ քրեական օրենսդրությունում, ինչպես նաև անհրաժեշտ է գնահատել դրանց կիրառական արդյունավետությունը և հնարավոր ռիսկերը:

4. Որոշակիորեն հետաքրքրական է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար խաղային գործունեությանը մասնակցելու օրենսդրական արգելք սահմանելու առաջարկությունը, սակայն դրա հիմնավորման համար նպատակահարմար կլիներ ներկայացնել համապատասխան վիճակագրական կամ էմպիրիկ տվյալներ, որոնք կվկայեին նման սահմանափակման անհրաժեշտության և համաչափության մասին:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը և առավելապես վերաբերում են առանձին դրույթների լրացուցիչ հիմնավորման կամ հստակեցման անհրաժեշտությանը:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Զարուհի Ռոմիկի Հարությունյանի՝ «Կոռուպցիոն վարքագծի կրիմինոլոգիական և հոգեբանական պատճառները» ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանի շնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել և 2026 թվականի հունիսի 15-ին դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը:

Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
ղեկավարի պարտականությունները կատարող **Մ.Զ. Ամյան**